«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հոկտեմբերի 2016 թվականի

2015-2016 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների մասին

Լսելով և քննարկելով **«2015-2016 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքները»** հարցը (զեկուցող՝ ուսումնակազմակերպական աշխատանքների գծով պրոռեկտոր Մ.Ն.Հարությունյան)՝ գիտական խորհուրդն արձանագրում է. կիսամյակի ընթացքում ռեկտորատը, դեկանատները և ամբիոնները բավական աշխատանք են կատարել ուսումնական գործընթացը կազմակերպելու, նկատված թերությունները շտկելու, կրթական բարեփոխումները նոր մակարդակի հասցնելու, ուսումնական և կատարողական կարգապահությունը բարձրացնելու ուղղությամբ: Այդ նպատակով կազմակերպվել են հանդիպումներ և քննարկումներ բոլոր ֆակուլտետների դասախոսների և ուսանողների հետ, լսել նրանց կարծիքներն ու առաջարկները դասերի կազմակերպման, դասավանդման որակի բարձրացման և գիտելիքների գնահատման մեխանիզմի կատարելագործման ուղղությամբ: Հարցումներն ուսումնասիրվել են, քննարկվել են ուսումնամեթոդական խորհրդում և գիտական խորհրդում և ընդունվել են համապատասխան որոշումներ: Պարբերաբար ստուգվել են ուսումնական գործընթացի կազմակերպման վիճակը լսարաններում, արդյունքները քննարկվել են ֆակուլտետների խորհուրդներում և ընդունվել են համապատասխան որոշումներ:

Կիսամյակում առկա ուսուցման բակալավրիատի I-III կուրսերում ուսման առաջադիմությունը հիմնական քննաշրջանից հետո կազմել է 79.3% (անցած ուսումնական տարվա նույն կիսամյակում՝ 79.2%): Ուսման ամենաբարձր առաջադիմությունն արձանագրվել է հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետում՝ 85.1%, իսկ ամենացածրը՝ ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետում՝ 63.0%:

Միայն «գերազանց» գնահատական ստացած ուսանողների տեսակարար կշիռը կազմել է 22.3% (անցած տարվա նույն կիսամյակում՝ 21.3%): Նշենք, որ տարբեր ֆակուլտետներում այս ցուցանիշը տատանվում է 13.6-32.7%-ի միջակայքում: «Գերազանց և լավ» գնահատականներ ստացած ուսանողների տեսակարար կշիռը նվազել է և կազմել 16.7% (անցած տարվա նույն կիսամյակում՝ 21.0%):

Բակալավրիատի 2837 ուսանողից (I-III կուրսեր) վերահանձնումներին և չներկայացածների քննություններին մասնակցել են 588-ը, այսինքն՝ ուսանողների 20.7%-ը (անցած տարվա նույն կիսամյակում՝ 20.8%):

Առկա ուսուցման մագիստրատուրայի I կուրսում ուսման առաջադիմությունը հիմնական քննաշրջանից հետո կազմել է 78.0% (անցած տարվա նույն կիսամյակում՝ 74.0%):

Հեռակա ուսուցման բակալավրիատի (I-IV կուրսեր) ուսման առաջադիմությունը քննաշրջանից հետո կազմել է 39.6% (անցած տարվա նույն կիսամյակում՝ 36.4%): Նշենք, որ հեռակա ուսուցման համակարգում կրեդիտային համակարգով սովորող ուսանողների 3.4%-ը սովորում են գերազանց առաջադիմությամբ (նախորդ տարվա նույն ժամանակաշրջանում՝ 2.1%):

Հեռակա ուսուցման մագիստրատուրայում ուսման առաջադիմությունը հիմնական քննաշրջանից հետո կազմել է 65.2%՝ նախորդ տարվա նույն կիսամյակի 69.3%-ի փոխարեն: «Գերազանց» գնահատականներով սովորում են ուսանողների 10.1%-ը (նախորդ տարվա նույն կիսամյակում՝ 10.6%):

Երկրորդ կիսամյակում շարունակվել է մի շարք առարկաների թեստային բազաների բարելավումը, նվազել են բողոքարկումները, քննություններին ու ստուգարքներին չներկայացած ուսանողների քանակը, քննական փաստաթղթերում թույլ տրվող վրիպակները:

Արձանագրելով դրական տեղաշարժերը, խորհուրդը միաժամանակ նշում է, որ դեռևս կան թերություններ և չլուծված խնդիրներ.

1) Ուսանողների դասահաճախումները և դրանց գրանցումները դասամատյաններում:
2) Դասամատյանների լրացումներում և արդյունքների ամփոփումներում առկա են թերություններ և բացթողումներ:
3) Բացթողումներ և թերություններ կան դասատախտակների և քննագրաֆիկների կազմման գործընթացում:
4) Դեռևս չի հաջողվում ամբողջապես բացառել կարգապահական խախտումները և դասաձախողումները:
5) Լուրջ թերություններ կան առանձին դասախոսների կողմից ուսանողների ակտիվության գնահատման և ամփոփման աշխատանքներում:
6) Որոշ մոդուլների գծով թեստային բազաները ոչ միայն պարբերաբար չեն բարեփոխվում, այլև անգամ նվազագույն քանակի հարցեր չեն պարունակում, չեն ստուգվում թեստային բազաները քննաշրջանից առաջ, որոշ ամբիոնների վարիչների կողմից այդ գործընթացները չեն վերահսկվում:
7) Առկա են ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի արդիականացման և դրանք գործատուների ժամանակակից պահանջներին համապատասխանեցման խնդիրներ (մասնավորապես՝ մագիստրոսական կրթության բնագավառում):
8) Թերություններ կան խմբերի ձևավորման և լսարանների բաշխման գործընթացում:
9) Բավարար համարել չի կարելի մագիստրոսական խմբերի ձևավորման աշխատանքները:
10) Լուրջ թերություններ կան մագիստրատուրայում ընդգրկված դասախոսների ընտրության հարցում:

Ելնելով վերոնշյալից՝ գիտական խորհուրդը **որոշում է.**

1. Հանձնարարել ռեկտորատին՝

1) մշակել համալիր միջոցառումներ բակալավրական և մագիստրոսական կրթության կազմակերպման բարելավման ուղղությամբ՝ խրախուսելով դասավանդման տարբերակված մեթոդների և մոտեցումների կիրառումը ըստ կրթաձևերի.
2) մշակել առաջարկություններ՝ ուսուցման տարբեր ձևերում ուսանողների գիտելիքների գնահատման համակարգի կատարելագործման ուղղությամբ.
3) մշակել և ներդնել պրոֆեսորադասախոսական կազմի վարկանիշավորման ընթացակարգ.

4) ապահովել բացառապես բարձր որակավորում ունեցող մասնագետներով պրոֆեսորադասախոսական կազմի համալրումը.
5) ապահովել դեկանատների և ամբիոնների արդյունավետ փոխգործակցությունը, հսկողություն սահմանել կատարողական կարգապահության նկատմամբ.
6) հսկողություն սահմանել մագիստրոսական խմբերի ձևավորման, դասախոսների ընտրության և դասընթացների կազմակերպման վրա:

2. Հանձնարարել ֆակուլտետների դեկաններին՝

1) ֆակուլտետի խորհրդում պարբերաբար քննարկել գիտական խորհրդի և ռեկտորատի որոշումները, մշակել որոշակի հանձնարարականներ դրանց կատարման ուղղությամբ: Դրանք հասցնել դասախոսներին և ուսանողությանը ու հետևել դրանց կատարման ընթացքին.
2) ֆակուլտետների խորհուրդներում մանրամասն քննարկել մագիստրոսական ծրագրերը, դասավանդողների որակական մակարդակը.
3) բարձրացնել ամբիոնների վարիչների, դասավանդող դասախոսների պատասխանատվությունը դասավանդման որակի բարձրացման և աշխատանքային ու կատարողական պարտականությունների կատարման ուղղությամբ.
4) վերահսկողություն սահմանել գիտելիքների գնահատման գնահատականների հաշվարկման և քննական ամփոփաթերթերի, ստուգման գրքույկների լրացման գործընթացի վրա՝ բացառելով բացթողումները, վրիպակները, ջնջումները և շեղումները նորմատիվային պահանջներից: Յուրաքանչյուր խախտում դարձնել քննարկման առարկա և արդյունքները ներկայացնել ռեկտորատ.
5) որոշակի միջոցներ ձեռնարկել սեմինար, գործնական և լաբորատոր աշխատանքների կատարման արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Ուսանողների ակտիվության գնահատման և արդյունքների հաշվարկման գործընթացի յուրաքանչյուր խախտում դարձնել քննարկման առարկա.
6) միջոցներ ձեռնարկել ուսումնական և կատարողական կարգապահության բարձրացման ուղղությամբ, բացառել դասաձախողումները, դասախոսների միմյանց փոխարինման դեպքերը: Կարգապահության խախտման յուրաքանչյուր դեպք դարձնել քննարկման առարկա և համապատասխան պատժամիջոցներ կիրառելու առաջարկություններ ներկայացնել ռեկտորատ.
7) կանխել ապատեղեկատվության տարածումը դասախոսների և դեկանատի աշխատողների կողմից.
8) ամփոփիչ ատեստավորման պատշաճ կազմակերպման նպատակով ամբիոնների հետ քննարկել հանձնաժողովների նախագահների և անդամների թեկնածությունները՝ մինչև մարտի 20-ը դրանք ներկայացնելով ռեկտորատ:

2. Հանձնարարել ամբիոնների վարիչներին՝

1) նոր կրթական ծրագրերին համապատասխան մշակել թեստեր, ինչպես նաև թարմացնել և տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն ներկայացնել ամբիոնի կողմից թեստերի վերամշակված տարբերակները.
2) թեստի որակի ապահովման, ինչպես նաև տեղեկատվության արտահոսքի կրճատման նպատակով ամբիոնները կիսամյակի ընթացքում լիազոր ներկայացուցիչների միջոցով մինչև կիսամյակի երկրորդ ամսվա 15-ը պետք է

տվյալների շտեմարանում նորացնեն թեստերի առնվազն 20%-ը: Քննաշրջանից առաջ պարտադիր կարգով ստուգել դրանք.

3) հետևել խնամարկուների աշխատանքներին, ուշադրության կենտրոնում պահել մասնագիտական խմբերում ուսանողների կարգապահությունը և ուսման վճարների հավաքագրման գործընթացը.
4) կրթության համապատասխան որակ ապահովելու նպատակով լրջորեն զբաղվել պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման հարցերով: Ապահովել դասախոսությունների պատշաճ որակը, բարձրացնել սեմինար, գործնական և լաբորատոր աշխատանքների անցկացման մակարդակը: Առանձնակի ուշադրություն դարձնել հատկապես տնտեսագիտական իրավիճակային և վերլուծական խնդիրներին.
5) դասաբաշխումներն իրականացնելիս հաշվի առնել պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական կարողությունները և հմտությունները.
6) գործող կարգերից շեղումները բացառելու նպատակով լուրջ ուշադրություն դարձնել ուսանողների հաճախումների գրանցումներին, մատյաններում ուսանողների ակտիվության գրանցումները ժամանակին կատարելուն, գնահատականները հաշվարկելու և ամփոփաթերթերում դրանք գրանցելու գործընթացին.
7) ամբիոններում պարբերաբար կազմակերպել գիտաուսումնական սեմինարներ և քննարկումներ առարկայական տարբեր ծրագրերի շրջանակներում՝ դրանցում ընդգրկելով դասախոսներին և ասպիրանտներին.
8) դասալսումների անցկացման միջոցով հսկողություն սահմանել պրոֆեսորադասախոսական կազմի կատարողական կարգապահության, դասավանդման մեթոդների արդյունավետ ընտրության, դասախոսությունների, սեմինար և գործնական պարապմունքների անցկացման որակի նկատմամբ.
9) գիտական խորհրդի և ռեկտորատի որոշումները քննարկել ամբիոնների նիստերում, նշել որոշակի հանձնարարականներ դրանց կատարման և վերահսկման ուղղությամբ.
10) արդիականացնել ամբիոնում կարդացվող առարկաների առարկայական ծրագրերը՝ բացառելով դասընթացների և մատուցվող նյութի բովանդակության որևէ կրկնություն.
11) ուսանողների փորձառության արդյունավետության բարձրացման նպատակով հատուկ ուշադրություն դարձնել դրա անցկացման վայրի ընտրությանը և ուսանողների հաճախումներին.
12) ակտիվացնել ուսումնամեթոդական ձեռնարկների, խնդրագրքերի, դասախոսությունների տեքստերի նախապատրաստման և հրատարակման աշխատանքները:

3. Սույն որոշումը քննարկել բոլոր ամբիոնների և ֆակուլտետների խորհուրդների նիստերում:

4. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել պրոռեկտոր Մ.Ն.Հարությունյանին:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Կ. Լ. Աթոյան**
19.10.2016 թ.